ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 42 -Ա

<<27>> մարտի 2025 թվական քաղաք Մարալիկ

<<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ ՀՐ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ 16/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿՐՊԱԿԻ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 0,00062 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 2-րդ կետով հաստատված <<Հողամասի վարձակալության մասին պայմանագրի>> 10-րդ և 18-րդ կետերը, հաշվի առնելով Անի համայնքի ղեկավարի և <<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության /հետագայում Կողմեր/ միջև կնքված <<Հողամասի վարձակալության մասին>> 2015 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված պայմանագրի 10-րդ և 18-րդ կետերը և կողմերի միջև ձեռք բերված համաձայնությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի և <<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության միջև 2015 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված <<Հողամասի վարձակալության մասին>> պայմանագրի /հետագայում՝ Պայմանագիր/ 15-րդ կետով սահմանված վարձակալության ժամեկտը երկարացնել 5 /հինգ/ տարով՝ մինչև 2032 թվականի դեկտեմբերի 24-ը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված Պայմանագրի 8-րդ կետով նախատեսված հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 20 000 /քսան հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

ա) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վարձակալի հետ կնքել

համապատասխան համաձայնագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝11	դեմ՝0	ձեռնպահ՝0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ԶԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ	----------	----------	----------
Գ. ՊՈՂՈՍՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<27>> մարտի 2025 թ
քաղաք Մարալիկ